Այսպէս, ուրեմն, փաստերը ցոյց են տալիս, որ հանդիսաը և խաղաղութիւնը խանգարող հանդիսանում են ոչ թէ մահմեդականները, այլ հայերը, որի պատճառով մենք, այսինքն՝ Կովկասեան Իսլամական կառավարութիւնը, չենք կարող կատարելապէս հաւատալ հայերին:

Զէնքերը յանձնող հայերը կը լինեն մեր թանգագին հպատակները, որոնց պատիւը, կեանքն ու գոյքը կը դառնան մեր հովանաւորութեան տակ. նրանց վերաբերմամբ ամենափոքրիկ ցոյցն իսկ չի թոյլատրւի: Զէնքեր չյանձնող հայ գիւղերը կը համարւեն կառավարութեան թշնամի և նրանց դէմ ձեռք կառնւեն խիստ միջոցներ»:

Շնորհիւ իրենց ճկուն բնաւորութեան, գողթնեցիք կարողացան գլուխ պահել «Իսլամական կառավարութեան» իշխանութեան տակ:

1919թ. մայիսին, Նախիջևանի գրաւումից յետոյ, Գողթնը դարձաւ նրա երեք գաւառներից մէկը՝ Ագուլիս կենտրոնով: Ընդհ.-նահանգապետ Գ. Վարշամեանը Գողթնի գաւառապետ նշանակեց Աշոտ Մելիք-Մուսեանին, իսկ միլիցիապետ՝ երիտասարդ ու քաջ սպայ Մովսէս Գիւլնազարեանին: Սրանք նոր էին հասել իրենց պաշտօնավայրը, երբ տեղի ունեցաւ մահմեդական ապստամբութիւնը Նախիջևանում, և Գողթնը նորից կտրւեց Հայաստանից:

Օգոստ. 3-ին, Ա. Մելիք-Մուսեանն ու Մ. Գիւլնազարեանը, Վերին Ագուլիսից, «Հայաստանի Խորհրդարանին, Հայաստանի կառավարութեան, Գորիսի, Ղափանի, Գենուազի պետական ներկայացուցիչներին, Ազգային Խորհուրդներին և ի լուր համայն հայութեան արին հետևեալ դիմումը.

«Նախիջևանն ընկաւ. շրջանի հայութեան բաւական խոշոր մասը սրի է քաշւած, Արաքսի մէջ նկատւած են մեծ թւով դիակներ: Նախիջևանի մեր գօրքերը, ըստ թուրքական լուրերի, կոտորածից ազատւած հայութեան մնացորդների հետ նահանջել են դէպի Դարալագեազ: Նոյն աղբիւրներից իմանում ենք, որ Նեհրամում հազարից աւելի հայ գերեալներ կան: Զուլֆայում ու Զուղայում խոշոր դէպքեր տեղի չեն ունեցել — ժողովրդի մեծագոյն մասը և մեր փոքրաթիւ զօրքը անցել են Պարսկաստան: Ագա և Դեր գիւղերը անվնաս գաղթեցին Ցղնա: Երնջակի ձորում, ականատեսների պատմելով, տեղի են ունեցել սոսկալի կոտորածներ: Ղազանչիից ազատւել և Գողթն են ապաւինել մօտ 500 հոգի: Մի օր տևող կռիւներից յետոյ Գեազը, Փորաղաչտը և Շուռուիթը չատ քիչ զոհեր տալով՝ քաշւել են Գողթն:

Յուլ. 25-ից Գողթնում ուժեղ կռիւներ են տեղի ունեցել: Վերին գիւղերում (Փառակա—Բիստ) յաջողութիւններն առ այժմ մերոնց կողմն են: Տանակերտը 8 օր է պաշարման վիճակի մէջ է. այստեղ տեղի են ունենում դիրքային անընդհատ կռիւներ: Պաշարւած կարելի է համարել Վերին և Ներքին Ագուլիսները: Թուրքերը խոշոր պատրաստութիւններ են տեսնում մաքրելու Գողթնը հայութիւնից: Ժողովուրդը աննկարագրելի նեղութեան մէջ է հացի կողմից: Արտաքին աշխարհից կտրւած ենք բառի ամենալայն իմաստով: Մի քանի անգամներ սուրհանդակներ ենք ուղարկել Գենուազ օգնութիւն և լուր ստանալու համար, բայց մինչև օրս չեն վերադարձել: Գողթնը լքւած իր հարազատներից և կտրւած արտաքին աշխարհից, իր անելիքների մասին ճիշտ հաշիւ տալ իրեն չի կարող: Ապաւինել թուրքերի ողորմածութեանը՝ ներկայ հանգամանքներում անհնարին է: Ի սէր Աստծոյ, ցոյց տուէք մեզ փրկութեան ճանապարհ: Սեփական միջոցներով ամենաշատը